«Հրմէցէ՞ք հացի»:

«Ադէ՛ր տեր հայր, օրհնի՛ր հացը»...

Այսինքն՝ սեղանի ճաշը:

Զանգեզուրցին խոսքի ճշմարտության վկա էր կանչում հացը՝ նրա վրա ձեռքը դնելով՝

«Էս հացը վկա»:

Եվ երդվում էր հացով:

Զանգեզուրը փուռը և փռան մեջ հաց թխելը չգիտի: Դրա համար նա ուներ poroնը կամ porէնը, մինչդեռ նրա հարևան թուրքը սիրում էր ավելի սաջի վրա թխած հացը: Սաջն այն հարմարությունն ուներ. մանավանդ սարում, որ ոռքով վեր՝ կարող էր գործադրվել հաց թխելու, իսկ երեսով վեր՝ միս և այլ մթերք տապակելու համար, բրթավրի՝ թավայի փոխարեն[2]: Անշուշտ, poroնը թուրքերի մեջ մտել էր, երբ նրանք Միջին Ասիայի տափաստաններից տեղափոխվել են Կասպից ծովից հարավ-արևմուտք և յուրացրել են սույնը տեղական բնակիչներից: Նոր poroնի մեջ հաց թխելուց առաջ նախ օրհնել էին տալիս ադէրին՝ տէրտէրին, որը սրսկում է poroնի պատերը եկեղեցուց բերած օրհնած ջրով: Այսպես վարվում էին նաև հարամած poroնի հետ: Այս արարողության մեջ հավանական դեր էր խաղում և այն մտայնությունը, իբր գետնին վխտում են բաշկէրը, ուստի նրանց մերձենալուց և չար ազդեցությունից պետք է պաշտպանել գետնի մեջ նստեցրած poroնը:

Հաց թխելը Զանգեզուրումն էլ ամուսնացած, մեծ մասամբ հասակն առած կնոջ գործ էր համարվում: Հասակն առած աղջիկներն ու ջահել հարսները միայն օգնականների պարտականություններն էին կատարում՝ ալյուրն էին բերում, ջուրը, աղը, մաղը, երբեմն նաև հացը բաց անում, բայց երբեք հացը poroնի մեջ չէին նստեցնում:

Թոroնի վառելիք փայտը տղամարդն էր բերում անտառից, մեծ մասամբ բեռներով, իսկ աթարը առավելապես պատրաստում էին կանայք: Կանայք էին տավարի թարմ բրէքը հավաքում, դարմանախառն ծեփում տան դրսի պատերին կամ բակում փռում էին գետնին ու կոխ տամ՝ կոխկրտում: Երբ բրէքի հաստ շերտը չորանում էր, նրան բահով աղյուսանման կտրտում, կողքի վրա էին կանգնեցնում և վերջնականապես չորացած աթարը կոն-կոն՝ կոնաձև դիզում: Գործածելիս նախ վերցնում էին կոնէրի միջից և ապա պատերից:

Զանգեզուրում ասում են ոչ թե հացը թխել, այսինքն՝ պատին կպցնել, այլ յէփել[3], մի արտահայտություն, որը ժառանգաբար անցել էր շատ հնուց, այն ժամանակներից, երբ իրոք հացը յէփվում էր, խմորը տաք ջրի մեջ ձգելով և ոչ թե պատրաստվում էր բորբոքված կրակի մոտ դնելով:

Լավաշ հացը շատ թէժ կրակ է պահանջում. այդ պատճառով այնտեղ, որտեղ ծոՒ՝ թույլ կրակ տվող աթար էր poroնում վառվում, թխում էին պոզ[4] կամ բՒիֆՒն[5] հաստ հացը, որը յէփվում է և ծոՒ կրակի վրա, իսկ որտեղ

---

2 Թոroնը տարածված է նաև Անդրկովկասի և հարևան Իրանի ժողովուրդների մեջ, իսկ հայաբնակ բոլոր վայրերում մինչև Սվազ-Կեսարիա նրա հետ արդեն մրցում է փուռը (լատիներեն—furra): Ամասիայի և սեբաստիայի հայերը արդեն գիտեն միայն փուռը: Թoroնը նրանց անծանոթ է:

3 Կապանում (Արծվանիկ) ասում են՝ հացը թխել:

4 Կապան:

5 Գորիս: